Արձանագրություն N 3
«ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/5ՏՀ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «15» հոկտեմբերի 2018թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Մեսրոպյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

1. Առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին
(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը հիմք ընդունելով 04.10.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, որոշեց հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջարկված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ ««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հարցում կատարելու և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին
(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը որոշեց ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

Միաժամանակ հանձնաժողովը որոշեց ծանուցել 1-ին տեղ զբաղոցրած մասնակցին և առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու որակավորման չափդանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին
(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն և Կոմիտեի կողմից եզրակացության ներկայացման հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15:00-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ն.Մեսրոպյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան

Scanned by CamScanner